

## Տ. ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Ծնվել է 1971 թ. մայիսի 10-ին Էջմիածին քաղաքում, ավազանի անունը՝ Հրանտ:

1978–88 թթ. սովորել և ավարտել է տեղի հմր. 9 դպրոցը:

1988 թ. ընդունվել է Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1993 թ. դեկտեմբերի 25-ին, Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Գերաշնորհ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի:

1994 թ. մայիսին ավարտել է հոգևոր ճեմարանը՝ ավարտաճառի թեմա ունենալով՝ «Սահակ վարդապետ Ամատունու կյանքն ու գործը և գրական վաստակը»:

1996 թ. հունիսի 9-ին, ձեռամբ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Կյուրեղյանի, ձեռնադրվել է քահանա: